ԹԵՄԱ 3. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ XIX ԴԱՐՈՒՄ

§ 25. ՉԻՆԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐՈՒՄ: ԳԱՂՈՒԹԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ

1 Անգլիական նավատորմը և զորքերը հարձակվեցին Չինաստանի վրա, ռմբակոծեցին և հրդեհեցին Կանտոն քաղաքը: Չինական զորքերը պարտություն կրեցին: Անգլիան գրավեց Հոնկոնգ կղզին և Չինաստանին պարտադրեց մի շարք նավահանգիստներ բացել իր վաճառականների առաջ: Չինաստանը ստիպված էր թույլատրել ափիոնի և անգլիական մյուս ապրանքների, հատկապես գործվածքների ներմուծումը:

2 Գյուղացիները պետք է ապրեին համայնքներով, միասին մշակեին ընդհանուր դաշտերը, հավասար իրար մեջ բաժանեին հացուստները, դրամը ծախսեին համատեղ, որ անհավասարություն չլիներ, որ բոլորը լինեին կուշտ և հագնված: Արդարացի ապագա հասարակության մասին տայպինների պատկերացումները ուտոպիական էին: Նրանց կարծիքով մարդիկ պետք է բավարարվեին նվազագույնով: Այսինքն՝ մարդու պահանջմունքների լիակատար բավարարումը խորթ էր նրանց համար: Դա աղքատության վրա կառուցված հասարակություն էր: